վիլ համհարգին ձեռօք իմացուց ինձ յայտարարութիւնը, որ սակայն բոլորովին համաձայն էր իւր խօսման հետ. այնպէս որ ժամը 3.45ին կրցայ ղրկել պ. դուքսն Գրամոն վերոյիշեալ հեռագիրն։

Ինչո՞ւ Պրուսիոյ թագաւորը փոխանակ գիս կոչել տալու, ինձ պատասխանեց իւր համհարգին ձեռօք։ Պատճառն յայտնի է։ «Նոր և անակնկալ գիջումն» զոր նոյն առաւօտ խնդրած էի իրմէ, տժգոհացուցեր էր զինքը. և երբ՝ ինձ հետ բանակցելէն քիչ յետոյ, ընդունեցաւ Պարիզէն Պ. Վերթերին տեղեկագիրն, և տեսաւ որ դուքսն Գրամոն կը պահանջէր մի այլ մեծագոյն գիջումն, գիջումն մի զոր ես իմ կողմանէս կ'անգիտանայի և չէի կրնար ես առնուլ, այն ատեն յետ ղրկելով ինձ վերոյիշեալ տեղեկագիրն, որոշեց այլ ևս չդառնալ նոյն պատճառաբանութեանց վրայ. և իրօք, երբ նոր ունկնդրութիւն մի խնդրեցի, իմացուց ինձ որ չէր հաճէր դարձեալ վիճաբանել խնդրոյ մը վրայ, որ ինքն վերջացած կը համարէր։ Քիչ վերջ Գուլիէլմոս Ա. հեռագրաւ մի տեղեկացուց Բիզմարքի նոյն օրուան դէպքերն, և այս եղաւ Եմսի նշանաւոր հեռագիրն, զոր մեծ սենեկապետն յայտնապէս այլափոխելով՝ հրատարակեց Գերման հասարակութեան, այսու՝ պատերազմն անխուսափելի ընելով։ Ուշ դնելու է որ ցl3 յուլիսի Բիզմարք իշխանը ամենևին չէր մասնակցած Եմսի բանակցութեանց, և թէ Գրամոն դքսին յետին անգամ՝ ըրած պահանջմունք՝ այնպէս ըրին՝ որ Պրուսիոյ թագաւորը հարկ համարեցաւ կոչելու զինքն ի միջամտութիւն, և սա կրցաւ յարմար առթիւ մղել զԳաղղիա ի պատերազմ։

Ընդհանրապէս, եթէ գաղղիական կառավարութիւնը նոյն իր նախընթացաբար սկըսած ճամբուն մէջ յառաջէր, եթէ առ ոչինչ գրելով Անտոն իշխանին հեռագրալուրը, սպասէր որ Պրուսիոյ թագաւորին շնորհուած ժամանակամիջոցն լրանար, սա պիտի ընէր ինձ — ինչպէս իրօք ըրաւ — յայտարարութիւնը, զոր ես պիտի հաղորդէի — ինչպէս իրօք հաղորդեցի — ի Պարիս, և Գաղղիա պիտի ունենար լի և կատարեալ գոհունակութիւն։ Ուրեմն, եթէ ենթադրութեամբ, յապաւենք յետին ժամու միջադէպքը, ինչ կը մնայ մեզ։ Կը մնայ այն՝ զոր դուքսն Գրամոն բացարձակապէս մերժեր է. այսինքն, որ ես կատարեր էի լիուլի յաջողութեամբ ինձ յանձնուած պատգամաւորութիւնը։

## ԱՂՕԹՔ ՄԱՆԿԱՆ

Հայր մեր երկնից, հաճի՛ր լսել նորին աղօթքին,
Դու ես միայն խնամող մանկանցըդ մանրիկ,
'Ի այնքան բարեաց կամիս թէ, շնորհս հատուցի
Եւ խընդրեսցեն սեռն նուաստ մանկեզծիկ՝
Որոց այնքան կարօտին:
Զամենայն ինչ ետուր ինձ՝ կեանս և լոյս,
Զցորեան 'ի հանդ, զծաղիկս հովտաց իմ աչաց,
Ըզհայր և զմայր և զընտանիս երկկրայս,
Առ քեզ միայն ուղղեմ զաղօթս իմ, Աստուա՛ծ,
Յաւիտենից և յերկիր:

Հա՜յր երկնաւոր, բարեկամութեամբս քո օրհնեալ
Վասն իմ և փառք ինձ 'ի գուծս յաղթելով,
Երջանկութիւն նոցա՝ հանձայս ինձ շնորհեա՛.
Իցէ՛ ողջակեր նոցին հրլուր՝ միշտ լցեն
Քեզ ի նոցա սիրելիք:

Տիկին Տրգասար

Թրգ. Մ. Ալեմշահեան